ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ԱՊՐԻԼԻ 23-Ը՝ ՆԱՀԱՏԱԿ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՕՐ

Վերջին տարիներին գեղեցիկ ավանդույթ է ստեղծվել Արարատյան Հայրապետական թեմում. ապրիլի 23-ին, ի հիշատակ Մեծ եղեռնի նահատակ հոգևորականների, Քաղաքային պանթեոնում, Կոմիտաս Վարդապետի շիրմի առջև, հոգեհանգստյան հանդիսավոր արարողություն է կատարվում: Այս անգամ, Արարատյան Հայրապետական թեմի Առաջնորդական փոխանորդի օգնական Տ. Թորգոմ Աբեղա Տոնիկյանի գլխավորությամբ, հոգեհանգստյան արարողությանը մասնակցում էին թեմի բոլոր հոգևորականները, բազում հավատացյալներ, թեմի «Մանկունք» արական երգչախումբը: Մասնակիցները ծաղկեպսակ զետեղեցին Կոմիտաս Վարդապետի արձանին և ծաղիկներ՝ պանթեոնում հանգչող հայ մեծերի հուշաքարերին:

Պահ էր աղոթքի, պահ էր հաղորդակցության Աստծո հետ, մեր անցյալի հետ, նահատակ հոգևորականների հաղթական ոգու հետ: Արարողության ավարտին Հայր Սուրբն իր մտածումները կիսեց ներկաների հետ. «Հոգևորականներին չենք ուզում զատել անապատներում ու աքսորի ճանապարհներին զոհված մեր բազմահազար նահատակներից, սակայն այսօր մենք այստեղ ենք՝ առավելաբար մեր հարգանքը, խոնարհությունն ու հավատարմությունը բերելու հայ մտքի ավագանուն ու Մեծ եղեռնին զոհ գնացած շուրջ չորս հազար հոգևորականներին: Այս պահը մեզ՝ հոգևորականներիս համար հատկապես հոգեսնուցման արժեք ունի, Աստծու ու մեր Եկեղեցու հետ կնքած սրբազան ուխտի նորոգման արժեք: Մենք սգում ենք նրանց, խնկարկում նրանց հիշատակը, միաժամանակ հպարտանում նրանցով: Հպարտանում ենք, որ ժառանգորդներն ենք Կոմիտաս Վարդապետի, Արմաշական սերնդի փայլուն ներկայացուցիչներ Խոսրով եպիսկոպոսի, Պսակ վարդապետի, Մկրտիչ վարդապետի և բազում այլոց, որոնք նոր Գողգոթայի ճանապարհով քայլում էին լուսաշող այն հավատով, որ հայոց երկնակամարում հավիտյան անմար շողալու է Լուսավորչի կանթեղը ...:

Պարտավորեցնող է Կոմիտաս Վարդապետի շիրմի առջև կանգնելը և վասն չորս հազար նահատակ հոգևորականների հոգեհանգստյան արարո-

ղությունն մատուցելը, հոգևորականները, որ ապրած կյանքով կենսավորեցին ավետարանական լույս խորհուրդը՝ «Հովիւն քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Նրանք ամենուր եղան իրենց հոտի մեջ՝ անապատի դաժան ճանապարհներին և ավերվող քաղաքներում, հրդեհվող եկեղեցիներում, դպրոցներում ու սպանդանոցի վերածված քանտերում: Վաղը մենք ենք լինելու հոգևոր առաջնորդները հայոց ազգի: «Տեր, հիշիր նահատակ հոգևորականներին» քարոզելիս հոգուդ մեջ նաև մեկ այլ աղոթք է արձագանքվում. «Տեր, հիշիր նաև մեզ, որ շարունակողն ենք նրանց սրբազան առաքելության»:

Արարողությունն ուղեկցվում էր «Մանկունքի» արձագանգային երգեցողությամբ՝ ներկաների աղոթքն առ Աստված բարձրացնելով «Գթա Տեր», «Քահանայք» և հոգևոր այլ երգերի թևածումով:

ՄԱՄՎԵԼ ՄՐԿ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Արարատյան Հայրապետական թիմ